

իսկ ի զինուորացն՝ առաջնումն Յմայեակ՝ ի Մամիկոնեան տոհմէն, եւ երկրորդին Վահան՝ զազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Յայոց Մեծաց. աստուածասերք եւ երկիւղածք յԱստուծոյ: 87 Եւ մինչդեռ ձեռք սրբոյ վարդապետին ընդ երկինս կարկառեալ կայր, տեսիլ սքանչելի եւ խաչանշան լուսաւոր շողածէ երեւեր ի վերայ ապարանիցն՝ յորում երանելին վախճաներ. զոր եւ ամենայն ուստեք ինքնատես լեալ եւ ոչ յընկերէն պատմեալ: 88 Իսկ սրբոյն զսիրոյ եւ զմիաբանութեան պատուիրանն աւանդեալ, եւ զհեռաւորս եւ զմերձաւոր արհնութեամբ պսակեալ եւ զհաճոյական աղաւթս հատուցեալ ի Տէր, անդէն վաղվաղակի աւանդեաց զհոգին ի փառս ամենասուրբ Երրորդութեանն:

89 Չոր ամեալ Յմայելի եւ Վահանայ կազմութեամբ վախճանելոց, հանդերձ աշխարհաժողով ամբոխիւ, սաղմոսիւք արհնութեամբ եւ երգաւք հոգեւորաւք, մոմեղինաւք վառելաւք եւ ջահիւք բորբոքելովք եւ անուշահոտ ինկաւք, եւ այնու խաչանշան յառաջախաղաց լուսաւոր նշանան՝ յԱւշականն ելանէին, եւ անդ ի մարտիրոսական յարկսն հանգուցանէին զսուրբ այրն Աստուծոյ եւ զարինաւոր տան յիշատակի երանելոյն կատարէին: 90 Ապա նշանն աներեւոյթ լինէր, եւ նոքա յիւրաքանչիւր տեղիս դառնային, փառաւորելով եւ արհնելով զԱստուած ի վերայ սքանչելեացն զոր Տէր եցոյց ի վերայ վարդապետին:

91 Իսկ յետ ամսոց երից անցելոց ըստ յաջողելոյն Աստուծոյ Վահանայ Ամատունոյ քրիստոսասիրի՝ կամեցաւ տաճար փառաց անուանն Աստուծոյ շինել յանուն սրբոյ վարդապետին, ի տաշածոյ վիմաց սքանչելապէս յարինեալ խորանս եւ գեղեցկապէս կազմեալս. եւ անդ ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն առնել. եւ վայելուչ սպասուք ոսկով եւ արծաթով եւ ակամբք պատուականաւք զտունն Աստուծոյ եւ զսեղան կենարար մարմնոյ եւ արեանն Զրիստոսի զարդարեր: 92 Եւ զնորին աշակերտն զգաստ եւ բարեպաշտան զԹողիկ՝ սպասաւոր նորին կացուցանէին եւ այդ եւս եղբարքք՝ կատարեալ զհանապազորդ պաշտանն: 93 Եւ որ վերակացուս ժողովրդեանն ըստ յայտնութեան սուրբ հարցն՝ զՅովսէփ եւ զՅովհան կացուցանէին արս ճմարտասերս եւ ողջախոս, որոց դէպ լինէր յետ վախճանի սրբոցն ազգի ազգի փորձութեանց ի վերայ եկելոց ի բռնաւորաց, մենակռիւ մենամարտիկ ի Պարսս ի Տիսպովն քաղաքի վասն Զրիստոսի, յաղթութեամբ բազմաւ. որոց եւ զխոստովանողական անուն ժառանգեալք, ի նոյն վերակացութիւնս վարդապետութեան դառնային յերկիրս Յայոց:

94 Իսկ բարեցապաշտն Վահան յանկարծահաս կենաց, ասպնջական ցանկալի ամենայն սրբոց լինէր, որ աշխարհածնունդ հայրենեացն սեպիական որդի գտեալ՝ շնորհաւքն Զրիստոսի մերձաւոր կենացն յաւիտենից լինէր: